Քարածխային արդյունաբերության ճեղքվածքի սրինակը մեր տնտեսական աշխատանքի պրակտիկայում աջ ուղղությունիցի արտահայտման եմուշներըց մեկն է: «Սոյուզուզ»-ի գեկավարությունը տեղերին հրահանգներ եր տալիս, վորոնցում փաստորեն առաջարկվում եր դանդաղեցնել արտադրական ծրագրերի կատարումը դանդաղան դժվարությունների պատճառով տակ: Հայտնի յե, վոր Դոնավազանում բանվորական ուժը մեծ, նախորդ տարիների վերաբերմամբ վո՛չ սովորական հոսունություն ուներ: Հայտնի յե վոր Դոնավազանում կոպերացիան դեռ հեռու եր այնպես վերակառուցված լինելուց, վոր կարողանար ինչպես հարկն է կազմակերպել բանվորական ծառայարարումը:

Բայց մի՞թե սրանից հետեվում է, վոր բայլընկերները պիտի կանգ առնեն այս դժվարությունների առջև:

Մենք մեզ կախման մեջ ենք դրել բանվորական սեզոնային աճից, տուում է ընկ. Սոյուսուզը Գարլովկայի կուսակալի ժողովում: Բայց մենք մոռանում ենք, վոր մեր գլխավոր հենարանը—դա մեր բոլոր հնարավորությունները վարպետությամբ ոգտադործելն է: Յեթե մեմք Դոնավազանի քարածխային արդյունաբերության մեխանիզացիայի գործի վրա առավելագույն ուշադրություն դարձնենք, մեմք սոցիալիզմի կոտաւցման գործում խոշորագույն արդյունքների կհասնենք:

Հենց այս ուղին են բռնել այժմ Դոնավազանի տեղական հատարողական և կուսակցական բոլոր կազմակերպությունները, վորոնք մեքենայացված, իսկական սոցիալիստական Դոնավազան տեղիդելու համար պայքար են ծախում: Դոնավազանն ունի այն բոլոր հնարավորությունները վորոնցով նա կարողանա դառնալ մեքենայացված քարածխային արդյունաբերության սրինակի շրջան: Փաստերը ցույց են տալիս, վոր քարածխի մեքենայացված հանքահանությունը Դոնավազանում 40%-ով դերպանցում է ընդհանուր հանքահանությունից: Այդպիսի արդյունքներ են ձեռք բերված այնպիսի պայմաններում, յերբ աշխատանքային մեքենաների և հանքահան մուրճերի 30-50 տոկոսը միանգամայն անդործության են մասնված: Թանկարժեք սարքավորումն ու մեխանիզմը փոխանակ քարածուխի նոր միլիոնավոր տոններ տուում, արտադրության մեջ մեռյալ վիճակումն են դանվում:

Դոնավազանի կուսակալը, կուսակցության կից բարտուղար ընկ. Մոյսոսովի ղեկուցման առթիվ Դոնի հանքահանողներին մարտական խնդիր առաջադրեց՝ ինչ էլ վոր լինի քարածուխի հանքահանության մեքենայացման 70-75 տոկոսով, նախագծված 64 տոկոսի փոխարեն: Յեթե այս խնդիրն իրագործվի, այն ժամանակ կիրականացվի նաև քարածխի ստացման նոր աճելացված ծրագրերը, վորն հսկայական հնարավորություններ և ստեղծում մեր յերկրի ինդուստրացման ամձան տեմպերն արագացնելու համար:

Կարելի յե առանց չափազանցության ասել, վոր քարածուխի ծրագրի կատարումը հարվածային յեռամսյակում վորոշում է պլանի արտադրական ամբողջ ծրագրի հաջող իրագործումը: Այժմ մենք ծայր աստիճան լարված վիճակ ենք ապրում յերկրի վառելանյութային պաշարների կողմից: Իհարկե վառելանյութային բալանսի բարելավման խնդիրը պետք է լուծվի մո՛չ միայն արտադրության դժով, այլ և վառելանյութեր գործածելու նորմերի ամենակերպ կրճատման միջոցով: Վառելանյութի տնտեսման լողունը բոլոր կազմակերպություններին առորյա մարտական խնդիրն է հանդիսանում: Սակայն ներկայումս գլխավոր խնդիրը հանդիսանում է մեր բոլոր ջանքերի մորթիլիցային, քարածխի արտադրական նշված պլանը կատարելու և գերակատալելու համար, վորից վերջին հաշվով կախված է տնտեսության մի շարք վերնուսական ճյուղերի (տրանսպորտի և այլն) պլանների կատարման հնարավորությունը:

Քարածուխի ստացման 21, 27 միլիոն տոնն յեռամսյակային պլանը, առաջ ընդունված 17 միլիոն տոննի հանդեպ, միանգամայն սեալ է և պետք է ինչ էլ վոր լինի իրագործվել կուսակցության և բանվոր դասակարգի համառ ջանքերի և լարվածության դժով:

## ՅԵՐԿԻՐՆ ԱԶՍԵՆԻԲ ԻՄՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՆՈՒՄԻՑ 5)

Մետաղի և քարածուխի ավերացված ծրագրերը ապահովում է մեր ներքին մեքենայաշինությունը յայն հնարավորությունների ոգտադործումը: ԳԺՑԻ միավորությունների կողմից հատուկ յեռամսյակի համար նշվում է ընդհանուր մեքենայաշինարարության 361 միլիոն ուրբուլ արտադրանք բաց թողնել: Դա դալի ավերացում է տալիս տնտեսական անցյալ տարվա չորրորդ յեռամսյակի հանդեպ:

Միաժամանակ նշվում է գյուղատնտեսական մեքենայաշինարարության արտադրանք բաց թողնել 139 միլիոն ուրբուլ, վոր 60 տոկոսի հայելում է յերեվան բերում: Այս առաջադրանքների կատարումը կապված է մեքենայաշինական ձեռնարկությունների ներքին այն սեուերաների հսկայական չափի հասնող մորթիլիցայի հետ, վորոնք առայժմ ծայր աստիճան անբաժարոր շահով են ոգտադործվում:

Տնտեսավարներն հաճախակի իմպորտի ավերորդ և չհիմնավորված պահանջներ են առաջադրում, փոխանակ իրենցից կախված բոլոր միջոցները ձեռք առնելու, վոր ներքին հնարավորությունները լիովին ոգտադործվեն: Հարցի այս կողմը խիստ կերպով ընդդմվում է կի սեպտեմբերի 3-ի գիմումի մեջ:—

«Խմպարտային սարքավորման բացահայտ վիճված պահանջների բողմաթիվ փաստերն, առանց արդյունաբերության ներքին սեուերաներն ոգտադործելու փորձեր սնելու, տնտեսական դեկավարների զեպի իրենց պարտականություններն յերեվան բերած բյուրոկրատիկ վերաբերմունքի ամենավառ օրինակներից մեկն է հանդիսանում և հաճախ դեպի մեր սոցիալիստական ինդուստրիայի հնարավորություններն ունեցած ուղորտունիստական թերահավատությունն են անդրադարձնում: Մինչդեռ քիչ չեն բացահայտ անկայուն փորձերը, վորոնցով աշխատում են զլանային առաջադրանքները թերահավատումը իմպորտի անբավարարու-

Թյամբ արդարացնել: Յեթե մեր կուսակցական, պրոֆմիութենական և տնտեսական կազմակերպությունները մի քանի դործարանների արհեստական հետեմբերով, ինչպես Ստալինի անվան Լենինգրադի մետաղագործարանը (սուբբոլիտիստական ընդլայնացում), իսկական նախաձեռնություն յիբնական բերելին մեր գործարանների արտադրական ռեսուրսների սպասարկումը խնդրում, այն ժամանակ արդյունաբերությունը յրացուցիչ հնարավորություններ կստանար սլանը վո՛չ միայն կատարելու, այլ և դպելի չափով գերակատարելու համար»:

Կուսակցության 16-րդ համագումարի դիրեկտիվները հենց ուղղված են այն նպատակին, վոր բոլոր ուժերով ապահովվի ներքին մեքենայաշինարարության առավելագույն աճումը:

Մեր յերկիրը չի կարող հաջողությամբ առաջադիմել, յեթե նա տարեցտարե աճելի ու աճելի մեծ կախման մեջ ընկնի և արտասահմանից մեքենաներ ու սարքավորում ներմուծի: Մենք պարտավոր ենք ներքին սարքավորումը ստավելազույն հնարավոր չափերով զարգացնել, վորպեսզի վորքան կարելի յի աճելի ռեսուրսներ տնտեսնք սեփական ծանր ինդուստրիան զարգացնելու համար՝ ներքին մեքենայաշինության արագ տեմպեր զարգացնելու միջոցով: Այս կերպ յերկիրն արագությամբ կազատվի կապիտալիստական յերկրներից իմպորտային կախում ունենալուց:

### ԵՆԵՏՐԻՖԻԿԱՑԻԱ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ելեքտրոշինտրարության ասպարիզում մենք ներկայումս վո՛չ պակաս «նեղ տեղ» ենք ապրում: Անցյալ տարվա արեֆինպլանի կատարման իրագործման ճեղքվածքների վրա անկասկած մի շարք շրջաններում ելեքտրոմատակարարման պահանջ ազդել է: Ծանր ինդուստրիայի աճման հարվածային յեռամսյակի նշված տեմպերի պայմաններում ելեքտրոմատակարարման անբնական աշխատանքը միանգամայն բացառիկ նշանակություն է ձեռք բերում: Առաջիկա յեռամսյակում ծրագրվում է, վոր յերկրի բոլոր ելեքտրակայանները 2-950 միլիոն կիլովատ-ժամ ելեքտրոններով տան, ըստ վորում շրջանային կայանները 1-400 միլիոն կիլովատ-ժամ պիտի տան:

Յեռամսյակում հատուկ ուշադրության է արժանի տրանսպորտը: Մենք մտել ենք տրանսպորտի աշխատանքի փոխադրությունների ամենալարված ժամանակաշրջանը, յերբ ժողովրդատնտեսության բոլոր ճյուղերի, ոտանձնուպես գյուղատնտեսական արտադրության կողմից տրանսպորտին առաջադրված պահանջը յիստ կերպով աճելանում է: Առաջիկա յեռամսյակում յերկաթուղային տրանսպորտի ամբողջ աշխատանքը 59 միլիարդ տոնն-կիլոմետր կհասնի, այսինքն անցյալ տարվա 4 յեռամսյակի համեմատությամբ 20 տոկոսով աճելի: Այս թվում տրանսպորտի բեռնային աշխատանքը կհասնի մոտ 46 միլիարդ տոնն-կիլոմետրի, անցյալ յեռամսյակից 43 տոկոսով աճելի: Այդպիսի պայմաններում տրանսպորտը պիտի բեռնաշրջանառության զգալի աճումն ապահովի: Հարվածային յեռամսյակում տրանսպորտը բերիտուր ամամբ կստանա վո՛չ պակաս քան 83 միլիոն տոնն բեռ, այսինքն 29 տոկոսով աճելի անցյալ յեռամսյակի համեմատությամբ:

Պարզ է, վոր տրանսպորտի աշխատանքի այսքան մեծ ծրագիրը կկատարվի ամենից առաջ վորակական ցուցանիշների զգալի բարձրացմամբ, վորտեք յիստ հետ են մնացել: Հնգամսյակի յերրորդ տարում մենք ձեռնարկում ենք

մեր տրանսպորտի վերակառուցման յոչորագույն յնդիքների յուժմանը: Երբ զուտ տեսք է պարտադիր կերպով կապվի տրանսպորտի ներքին ռեսուրսների հետադարձ մոբիլիզացիայի հետ, ռեսուրսներ, վորտեք դեռ շատ հեռու յեն ապրանքաձև յինելուց: Բավական է մատնանել, վոր ապրանքային վազանի արեալ միջին բեռնավորումը պիտի բարձրանա 5,05 տոկոսով, ապրանքաշարժման ընացքի կազմը պիտի 110 սրնու հասնի, իսկ ապրանքային վազանի սրահան միջին վազքը պետք է միջին թվով 135 կիլոմետրի հասնի, կո՛մ 44 տեղափոխվող աճելի անցյալ տարվա 4 յեռամսյակի համեմատությամբ: Տրանսպորտի մի բանվորի աշխատանքի արտադրողականությունը (արտադրանքը) հարվածային յեռամսյակում պետք է 1929-30 թվի համադրատեսիան ժամանակաշրջանի համեմատությամբ 26 տոկոսով բարձրանա:

Պրանք են հատուկ յեռամսյակի կարևորագույն վորակական առաջադրանքները տրանսպորտի վերաբերմամբ, վորտեք տրանսպորտային փոխադրությունների ամբողջ ծրագրի կատարման բազան են հանդիսանում

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ—ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

16-րդ համագումարը դիրեկտիվ է տվել ապահովել—

«Գյուղատնտեսության մեքենայացման և տրակտորացման ամենալիքագ զարգացումը, յոթիտնտեսական հնգամյակը յերեք տարում իրագործելը, ամբողջ ԽՍՀՄ գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը մեքենատրակտորային ամուր բազայի վրա դնելը»:

Կուսակցական համագումարի այս մարտական առաջադրանքը պահանջում է իհարկե, վոր ծանր ինդուստրիան յերեքամյակում վնասականպես դառնա դեպի գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը: 1930—31 թվին սոցիալիստական հողագործության գյուղատնտեսական ինվենտարի և մեքենայա-կառուցման պատվերը մեր արդյունաբերությանը կազմում է աճելի քան 800 միլիոն ռուբլի: Այդպիսի ծրագիր արդյունաբերությունն անկասկած կարող է կատարել: Գյուղատնտեսական մեքենայաշինության և սոցիալիստական հողագործության սպասարկման հետ կապված արդյունաբերական բոլոր այլ ճյուղերի պահանջ տեմպերով զարգացումը պետք է սկսվի հենց առաջիկա յեռամսյակից: Դա անհրաժեշտ է, վորպեսզի կոլտնտեսություններն ու յորհրդային տնտեսությունները տեխնիքպես իր ժամանակին նախապատրաստվեն 1931 թվի առաջիկա գարնանացանին:

Գյուղային գյուղատնտեսական մեքենաներ, ավտոտրանսպորտ և դրանցան ինվենտար մատակարարելու ընդհանուր քանակը յեռամսյակի ընթացքում մոտ 150 միլիոն ռուբլի յե նախատեսվում: Ներքին արտադրության քիմիական արտադրության յե մատակարարվելու գյուղատնտեսությանը յեռամսյակի ընթացքում մոտ 364 հազար փուլ:

Մենք յերկայումս կոլտնտեսական շարժման նոր ալիքի առաջացման վկա մեր ենք հանդիսանում միանգամայն ակներև է, վոր նոր կազմված կոլտնտեսությունները յանվոր գոտակարգից տեխնիկական և կազմակերպչական հսկայական սեփականություն կազաննեն, վորպիսին պետք է հասցվի նրանց հնարավորության առավելագույն սահմաններում: Ճիշտ է, գյուղացիական ինվենտարի հատարակ միացումը միայն արդեն կոլտնտեսականներին հսկայական առավել-

լուծյուն և տալիս անհատական դյուղացիական անտեսութեան վերաբերմամբ, սակայն կոլտնտեսութեան ներքում մնում է դեռ լուծելու մասը հողագործի սեփականատիրական հողերանութեան ձեռնարկութեան հակադասական խնդիրը: Վ. Ի. Լենինը մատնանշել է, վոր

«... Մանր հողագործութեան վերամշակման, նրա ամբողջ հողաբաժանութեան և սովորույթների վերամշակման գործը սերունդներ պահանջող գործ է. վնասել այդ հարցը մանր հողագործի վերաբերմամբ, առողջացնել այդպես առած, նրա ամբողջ հողերանութեանը, դա կարող է ամել միայն նյութական բազան, տեխնիկան, հողագործութեան մեջ մասնաշաղկապի չափերով տրակտորների և մեքենաների գործադրումը, մասնաշաղկապի չափերի հասնող ելեկտրոֆիկացիան: Ահա՛ ինչն արմատապես և վերաբերի արագութեամբ կիրառելի մանր հողագործին»:

Հենց այդ ուղիով են ընթանում այժմ կուսակցութեան ու բանվոր դասակարգը: Դրա համար էլ դյուղատնտեսական մեքենայաշինութեան և դյուղատնտեսական արտադրական կարիքների սպասարկման հետ կապված ինդուստրիայի այլ ճյուղերի համար զարգացումը վճարական նշանակություն ունեն սոցիալիստական հողագործութեան ճակատագրի համար:

### ԶԱՐԳԱՅՆՆԵՐ ԹԵԹԵԼ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՆ

Ինչ «Մեծ բեկման տարին» հողվածում, Հոկտեմբերի տասն և յերկուսուրորդ տարեդարձին, ընկ. Ստալինը նշեց, վոր

«... Անցյալ տարում մենք հիմնականում բարենպաստ լուծեցինք ծանր արդյունաբերության հիմնական շինարարության համար կոտորած կատարելու պրոբլեմը, արտադրության միջոցների արտադրության դարձուցման արագացված տեմպ վերցրինք և մեր յերկիրը մետաղյա յերկիր դարձնելու համար նախադրյալներ ստեղծեցինք»:

Այդ ժամանակվանից հետո մենք հետագա վիթխարի հատաշարի մասին քայլեր ձանր արդյունաբերության զարգացման գործում, յերկրի ինդուստրացման տեմպերն արագացնելու գործում:

Ծանր արդյունաբերության շրջանում ձեռք բերված հաջողությունների բազայի վրա մենք այժմ ընդհուպ մտանում ենք նաև թեթև արդյունաբերության ամրապնդման ու հետագա զարգացմանը:

«Մինչևի այժմ մենք ամենուրեք, այդ թվում նաև թեթև արդյունաբերության հաշվին տնտեսում ենք ծանր արդյունաբերությունը վերականգնելու համար: Սակայն ծանր արդյունաբերությունը մենք արդեն վերականգնեցինք: Այն պիտի միայն էլ ավելի ընդլայնել: Այժմ մենք կարող ենք դառնալ թեթև ինդուստրիային և առաջ շարժել այն արտադրված տեմպով: Մեր արդյունաբերության մեջ նոր յերեկույթն է միջին այլոց այն է, վոր մենք այժմ հնարավորություն ունենք արագացված տեմպով զարգացնել և՛ թեթև, և՛ ծանր արդյունաբերությունը»: (Ի. Ստալին, Բազմաշխույժութեան կուսակցության XVI համագումարում):

Այդ սպորտաձևներն առաջարկում է յին զարգացնել թեթև ինդուստրիան բազայի և դյուղի զորման գլխավոր լծակն համարելով այն: Կուսակցութեանը չընթացավ այդ ուղիով և ուժեղ կերպով սկսեց զարգացնել արտադրական գործարար՝ ծանր արդյունաբերության ամեն տեմպերն ամեն կերպ արտադրանք-

լու միջոցով: Այդպիսի ձեռք բաղաբահանութեան շնորհիվ կուսակցութեան արդեն իր XVI համագումարում արդարացեց, վոր անհրաժեշտ է

«... ուժեղացնել արդյունաբերության այն ճյուղերի զարգացումը, վորոնք մասնաշաղկապ սպասման արդյունքներն են արտադրում (թեթև ինդուստրիա), ինչպես և պետք է զարգացնել հումքային բազան»:

Հայտնի է, վոր մինչևի այժմ թեթև ինդուստրիայի զարգացման գլխավոր արդյունքը դյուղատնտեսական հումքի պակասն է հանդիսանում: Վերջին տարիների ընթացքում տեխնիկական կուլտուրաների բնագավառում դյուղատնտեսության հանրաշաղկապ հատվածի զարգացման համար խոշոր միջոցներ ենք ծախսում: Տեխնիկական կուլտուրաների 1930 թվի բերքը այս կողմից մեզ առաջին խոշոր հաղթանակը բերեց:

Անցյալ տարվա հանդեպ շաբարի ճակնեղի բերքի 150% ամեն և բամբակի ցանքերի տարածության հակադասական չափերով ընդլայնման շնորհիվ, հասուն կետամսյակում և հնդամյակի յերրորդ տարում մենք հարավորություն կունենանք զգալի չափով ավելացնել շաբարի արդյունաբերության ու բամբակի գործվածքների արտադրությունը: Ահա՛ մի քանի թվեր, վորոնք վորոշում են հատուկ յետամսյակի անելիքները թեթև արդյունաբերության զարգացման գծով: Կոչկեղենի ընդհանուր արտադրանքը կհասնի մոտ 19 միլիան զույգի, վոր մոտավորապես յերկու անգամ գերազանցում է անցյալ տարվա IV յետամսյակի արտադրությանը: Շաբարավաղի արտադրությունը հատուկ յետամսյակում կկազմի մոտ 1,5 միլիան տոնն, վորը հավասար է մոտավորապես անցյալ 1929-30 թվի շաբարի արդյունաբերության արտադրանքի ամբողջ քանակին: Կոչկեղենի յետամսյակային արտադրանքը մոտ 19 միլիոն զույգ կկազմի, վոր վորոշ չափով գերազանցում է սլանաշաղկապ արդյունաբերության կոչկեղենի արտադրանքի անցյալ յետամսյակի քանակին: Բուսական յուղի յետամսյակային արտադրանքը պիտի 134 հազար տոնն կազմի:

Գյուղատնտեսական հումքային բազայի հետագա ամեն և տարադրման միջոցով մենք ավելի ուժեղ կերպով կզարգացնենք մեր թեթև ինդուստրիան, վորով աստիճանաբար կմեղմանա լայն սպասման սպասանքների չափայնում այժմ զգացվող լարվածությունը: Կուսակցութեանը և բանվոր դասակարգի կարողացան բազմախիղճ լուծել մեր յերկրում ծանր ինդուստրիա, սոցիալիզմի բազա ստեղծելու հարցը, նրանք կկարողանան ամենակարճ ժամանակամիջոցում լուծել նաև թեթև արդյունաբերության զարգացման խնդիրը յերկրում սպասանքային սովը վերացնելու խնդիրը:

### ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՍՎԱԼԸ

Ինչպես տեսնում ենք հարվածային յետամսյակը՝ հնդամյակի յերրորդ տարվա արտադրական ընդհանուր խնդիրներից յեկնելով, արդյունաբերական արտադրանքի վիթխարի ամուն և նշում: Արդյունաբերությունը արտադրանքի ընդհանուր ծավալը 5.913 միլիոն ռուբլի յե կազմում ամենուրի արդյունաբերության արտադրանքի նկատմամբ, և ըստ հատուկ յետամսյակի պլանի ամուն է 38,5% -ի սահմաններում անցյալ տարվա ամեն միջին տեմպի հանդեպ: Անհրաժեշտ է ամենայն վճարականությամբ ընդգծել, վոր արդյունաբերության ամեն այդպիսի տեմպերի մասին դեռ նույնիսկ վերջերս ձեռք

չեցինք եւ յերազում: Հարվածային յեռամսյակի արդյունաբերական սպասարկման անման նշված տեղերը ստատիստիկական յերկու ամսում գերազանցում եւ ստատիստիկական միջին տարեկան այն ամսան, վոր նշվում եք հնգամբարկով:

Պարզ է, վոր մենք մեր տնտեսութեան ներքին ուժերի վիճակը հզորութեան նոր ապացուցել հետ գործ ունենք, վոր մենք գործ ունենք անտեսութեան պլանային սխտեմի անվիճելի առավելութեան հետ ամբողջ աշխարհի կապիտալիստական արտադրութեան այն անարխիայի հանդեպ, վորն այժմ տանտնային ուժեղ կերպով յերեւում է գալիս համաշխարհային իմպերիալիզմի խորացող ճգնաժամով:

Առաջիկա յեռամսյակում արդյունաբերութեան արտադրական պլանը շարունակվում է զարգանալ ծանր արդյունաբերութեան դերի աճող գերակշռութեան նշանի տակ, սակայն միևնույն ժամանակ զգալի չափով ատաճ է քաջվում նաև լայն սպասման առարկաներ արտադրող արդյունաբերութեանը:

Արդյունաբերական արտադրանքի նշված աճումը ձեռք է բերվում ինչպես արտադրութեան ներքին ուժերի անսուրճանի եւլ ավելի լրիվ ոգտագործման հաշվին, ծույնպես է շնորհիվ ավելի վաղ շահագործման մեջ դրված նոր Փորթիկաների և գործարանների ու գոյութուն ունեցողների զգալի չափով վերակառուցվելուն: Հետևյալս արտադրանքի աճման արտադրական ծրագրի անմեջականորեն չի կապված հիմնական շինարարութեան այն ծավալի հետ, վոր պիտի կատարվի հարվածային յեռամսյակում: Սակայն առավելագույն յեռամսյակի հիմնական շինարարութեան պլանը հսկայական կարելություն է նըշանակություն և ստանում, քանի վոր նա նախադրյալներ է պատրաստում արդյունաբերական արտադրանքի աճման տեմպերի հետագա զարգացման համար:

Ժողովրդաստեանութեան հանրայնացված հատվածի հիմնական աշխատանքների ընդհանուր ծավալը հատուկ յեռամսյակում քիչ ավելի յե 3 միլիարդ ռուբլուց: Այդ քվում մոտ 1 միլիարդ ռուբլի բաժին է հատնում ԳժՏԻ արդյունաբերութեան, 730 միլիոն ռուբլի՝ գյուղատնտեսութեան, 175 միլիոն ռուբլի՝ էլեկտրոֆիկացիային և 650 միլիոն ռուբլի՝ տրանսպորտին:

Արդյունաբերութեան հիմնական շինարարութեան բնագավառում 1929-30 թ. մենք հսկայական չափով հետ էլինք մնացել պլանից: Կուսակցութեան մի սեպտեմբերի 3-ի դիմումն ուղղակի հաստատում է, վոր 1929-30 թվի արտադրական պլանի թերահատարման հետ միասին.

«... բացահայտ անբավարար է նաև հիմնական շինարարութեան քննադատը: Հիմնական շինարարութեան պլանը ատաճին յերեք յեռամսյակներում կատարված է ավելի քիչ, քան կիսով չափ:

Հասկապես իսյոտառակ կերպով հետ է մնացել Ստրոյթեյի նեկեյի, Վսեխիմպրոմի, Կոքսոգադոխիմի, Նովոստալի, Մաշինոսթրոյեկինեյի, Սայուզսեյմաչի հիմնական շինարարութեանը: Հիմնական շինարարութեան մեջ տեղի ունեցած այս անթույլատրելի յերեվույթները արդյունաբերական զարգացման ընդունված տեմպերի համար, հնգամյակը չորս ատարում կատարելու համար սպառնալիք են ստեղծում»:

Հիմնական շինարարութեան տարեկան պլանը արդյունաբերութեանը 83%-ով է միայն կատարել: Անցյալ տարվա վերջին IV յեռամսյակում արդյունաբերութեանը մոտ մի միլիարդ ռուբլու հիմնական աշխատանքներ է կա-

տարել: Եռամսյակն էլ ծրագրված է բաց թողնել արդյունաբերութեանը հարվածային յեռամսյակում: Սակայն վաստորեն հսկումբեր-դեկտեմբեր յեռամսյակի ընթացքում հիմնական ներդրումները միլիարդանոց պլանը յուրացնելն ավելի դժվար խնդիր է նախորդ յեռամսյակի համեմատութեամբ, յերեք յսկապես շինարարական սեզոնի ամենայնուայն ժամանակաշրջանն էր: Հարվածային յեռամսյակի արդյունաբերութեան հիմնական շինարարութեան պլանը բոլոր ներդրումների կենտրոնացում է նախատեսում ժողովրդաստեանական երանակութեանը ունեցող շինարարական կարելիքագույն որյեկտներին շարքը: Իրա հետ միասին պետք է ավարտվեն այն ձեռնարկութեանները, վորոնք յեռամսյակի ընթացքում կարող են արտադրական շահագործման անցնել:

Հսկայական նշանկություն ունի արանսպորտի ներդրումների նպատակահարմար ուստադրծումը, վորովհետեւ նշված ներդրումների չափը, ջնայած յի պլանի մեծություն—650 միլիոն ռուբլի—ի հարկե շատ հեռու յե տրանսպորտային տնտեսութեան վերակառուցման աճող պահանջներին բավարարելուց: Գո միայն սկիզբն է մեր տրանսպորտի արմատական վերակառուցման այն վիճակի պլանի, վորը լայն ծավալ կատանա հնգամյակի յերրորդ տարում: Ե՛լ ավելի մեծ գոյություն պետք է ընտրվեն շինարարութեան որյեկտները, Ե՛լ ավելի մեծ յեռանդով պետք է տրանսպորտի վերակառուցման գործին ձեռնարկե տրանսպորտային աշխատավորների ակտիվը:

Կարիք չկա առանձնապես ապացուցել, թե ինչ հսկայական նշանկություն ունի մեր տրանսպորտը տնտեսական կապերն ու յերկրի պաշտպանութեանն ուժեղացնելու համար:

«Յեւ ահա ջնայած տրանսպորտի հսկայական նշանակություն, տրանսպորտի տնտեսությունը, այս տնտեսություն վերակառուցումը ախտաձեռնայնիվ դեռ հետ են մնում զարգացման ընդհանուր տեմպից: Պետք է արդյոք դեռ ապացուցել, վոր այդպիսի վիճակում մենք ռիսկ ենք առնում տրանսպորտը մեր ժողովրդատնտեսության «նեղ տեղը» դարձնել, վորը կրող է արգելք հանդիսանալ մեր առաջընթացման: Ժամանակը չի արդյոք վերջ տալ այս դրութեան: Սնդիրն այն է, վոր վերջապես բայլել վիճիրեն ձեռք դարնենք տրանսպորտի գործին և առաջ շարժենք այն»:  
(Ստալին, Կի քաղհաշվեալությունը XVI համագումարին):

Հարվածային յեռամսյակի հիմնական շինարարութեան պլանը կարող է լրիվ իրագործվել այն դեպքում, յեթե վերացվեն նախորդ յեռամսյակում շինարարութեան մեջ նկատված թերությունները: Նոր զիգանտների խոշոր կառուցումների վործը պետք է մանրազին ուսումնասիրվի: Շինարարութեան կարգավորման և նրա արժեքի իջեցման համար մղվող պայքարը, բանվորական ուժի լավագույն ոգտագործման և դեֆիցիտային շինանյութերի բաշխման համար մղվող պայքարը պետք է Կուսակցության բանվոր դասակարգի և պրոլետարական ամբողջ հասարակայնության ուշադրութեան կենտրոնը կազմեն:

Հիմնական շինարարութեան արժեքը հարվածային յեռամսյակում պետք է իջեցվի վն՝ պակաս քան 8%-ով, վորպեսզի գոնե վորոշ չափով ծածկվեն անցյալ տարվա ճեղքվածքները: Իրա համար պահանջվում է, վոր ինքը շինարարութեանն ավելի ինդուստրացիի, կառուցման պրոցեսներն առավելապես չափով առցիոնալացվեն, աշխատանքը ճշտորոշ կազմակերպվի և աշխատանք-



քային գիտցիպիլանս բարձրացիլի, — մի խոսքով յայն ծախարիկն այն բոլոր ձեռնարկումները, փորձեր կարող են ապահովել աշխատանքների ընդհանուր տղանի լրիվ և յուրաժամանակ իրազործումը:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգն առաջադրված խնդիրները կը կարողանան լուծել այն դեպքում, յեթե աշխատակազմի վերակառուցվեն հաստատակալան բոլոր կազմակերպությունների աշխատանքը այնպես, վոր նրանք յերեսով դառնան հատուկ յեռամայակի, բայց յեկիկյան դրոհի այս հարվածային յեռամայակի, շինարարական ու արտադրական պլանը:

### 3. ՊԱՅԲԱՐ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեր գատակարարային թշնամիները, փորձեր այժմ արդեն չեն կարողանում լուծել յամբանցիկ ԽՍՀՄ սոցիալիզմի աճման անվիճելի հաջողությունների վրայով, մինչևի այժմ ի վիճակի չեն մեր շինարարության բարձր տեմպերի «զարգացիք» խմանալ: Մինչդեռ բայց յեկիկյան տեմպերի հանելուկի լուծումը պիտի փնտռել այն հսկայական վողեվորություն և աշխատանքային տեմպի վերելքի մեջ, վորոնցով բռնկված են այժմ մեր յերկրի միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԿԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ — ԴՆ ՅԵ ԳԼԽՎՈՐԸ

Սոցիալիստական մրցություն և հարվածայնություն աճումը, հանդիպության արգիլիսպանը, անընդհատին անցնելը, — այդ բոլորը միանշարժաբն յոր պայմաններ են ստեղծում աշխատանքային վերելքի և աշխատանքի արտադրողականության աճման համար:

«Աշխատանքի արտադրողականությունը, ասում է Լենինը, դա յե վերջին հաջվով ամենակարգիորը, ամենազխտավորը յոր հասարակարգի հաղթանակի համար: Կապիտալիզմն ստեղծեց աշխատանքի աշխատի արտադրողականություն, վոր տեսնված չէր ճորտատիրության պայմաններում: Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթահարվել և վերջնականապես կհաղթահարվի նրանով, վոր սոցիալիզմը կստեղծի աշխատանքի յոր, անհամեմատ ավելի բարձր արտադրողականություն (Վ. XVI, յեր. 25) ուսերեն):

Ահա՛ թե ինչու Կուսակցությունն առաջին տեղն է տալիս աշխատանքի արտադրողականության և դրա հետ կապված մեր ամբողջ աշխատանքի վորակի բարձրացման խնդրին: Սոցիալիզմի վո՛չ մի հաղթանակ հնարավոր չի, յեթե բանվորների և գյուղացիների կողմից մեծապես չհերոսություն յերեկոյն չբերվի աշխատանքին յոր վերաբերմունք ունենալու, աշխատանքը բարձրագույն այն աստիճանին հասցնելու համար մղվող պայքարում, վորի վրա նա պիտի գտնվի սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում:

«Մենք պետք է, ասում է Լենինը, — ցվենք աշխատանքային այն ենտուգիազմով, դեպի աշխատանքն ունեցած այն կամքով, համառությունով, վորից այժմ կախված է բանվորների և գյուղացիների շուտապիւրջ վերը-

կախությունը, ժողովրդաստեղծության վերկուլթյունը» (Վ. XX, մ. 2. յեր. 433 ուսերեն):

Հետևապես, աշխատանքի արտադրողականության աճումը վնասակարգ է հանդիսանում հարվածային յեռամայակում ժողովրդաստեղծության գարգացման ամբողջ պլանի իրագործելու համար: Պլանը բանվորի աշխատանքի արտադրողականության բարձրացում է նշում մոտ 30 տոկոս: Աշխատանքի արտադրողականության այդպիսի աճումը զգալի չափով ապահովում է եներգողիվածություն ավելացման, ռացիոնալացման յեռանդուն ձեռնարկումների շնորհիվ: Սակայն դրանից վո՛չ պակաս չափով նա կախված է պրոլետարիատի իսկական աշխատանքային ենտուգիազմի յոր վերելքից:

### ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՍՈՑՄՐՑՄԱՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՇԸ

Հարվածային յեռամայակը, վորն սկսվեց 1930 թվի հոկտեմբերի 1-ին, հարվածային համաժողովենական արով, պետք է սոցմրցման և հարվածայնության արևը է՛լ ավելի բարձրացնի, մտցնի այն կազմակերպչական պատշաճ հունի մեջ: Սոցմրցումը և հարվածայնությունը վո՛չ թե հերթական կամպանիա, այլ արգիլիսպանի համար մասսաների կողմից մղվող կազմակերպված պայքարի մեթոդն են հանդիսանում:

«Սոցմրցման մեջ ամենանշանակալիցն այն է, վոր նա արժատական հեղաշրջում է առաջ բերում աշխատանքի վրա մարդկանց ունեցած հայացքների մեջ, քանի վոր նա պախարակելի է ծանր բեռից, ինչպես նա համարվում էր առաջ, պատվի գործ, փառքի գործ, բազուքյան և հերոսության գործ է դառնում» (Ի. Ստալին):

Սոցմրցման և հարվածայնության մեջ պիտի ներգրավվի լավագույնը, յե՛նչ վոր կա Կուսակցության և բանվոր դասակարգի մեջ: Յուրաքանչյուր բանվորի համար պիտի պարզ լինի, վոր սոցմրցումն ու հարվածայնությունը լավագույն հակաթույնն են հանդիսանում վնասարարության դեմ, լավագույն մեթոդն են հանդիսանում արգիլիսպանի իրագործելու իսկական պայքար մղող համար:

Մի շարք ձեռնարկություններում հարվածայնության շարժման վորոշ հաջողություններ ենք նկատում արդեն հենց այժմ, յերբ մրցման շնորհիվ վո՛չ միայն ժամկետից առաջ կատարվում է արտադրական ծրագիրը, այլ և զգալի չափով գերակատարվում է: Իրա շնորհիվ ձեռնարկության մեջ միանգամայն յոր աշխատանքային ռեժիմ է ստեղծվում, վորով ապահովվում է ուղեատանքային դիսցիպլինայի վերելքը, բուսկի կրճատումը և բաց թողած արտադրանքի վորակի բարձրացումը: Ամենուրեք, ուր միայն լայն չափերով դարգացել են իսկական սոցմրցումն ու հարվածայնությունը, և վո՛չ թե կեղծ հարվածայնությունը, — արգիլիսպանի համար մղվող պայքարը վո՛չ թե թրջի բանաձևով, այլ աշխատանքի, փառքի ու հերոսության իսկական գործ է գատնում:

Այնուհեղ այն շարժումն աճում ու ամրապնդվում է, ավելի ու ավելի մասսաներ ընդգրկելով և աստիճանաբար ավելի բարձր աստիճանի անցնելով:

## ՀԱՆԳԻՊԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՊԱԿԱՆ

Կուսակցութեան Կ Կ սեպտեմբերի 3-ի դիմումը ստանձնապես նքշում է սոցմրցման և հարվածայնութեան այդ անցումը նոր, ավելի բարձր ստատիվների:

«Սոցիալիստական մրցութեան և հարվածայնութեան դարձադրամ ջիւղէ նպաստում արտադրական ծրագրի առաջադրանքները մինչեւ ջիւղէ, բրիգադ և առանձին դարձադրամ հասցնելը: Մյուս կողմից սրտադրական ակտիվութեան դարձադրամ և հարվածայնութեան արտադրական նվաճումները, նրանց ուսցիոնալիցատորական նախաձեռնութեան հիմունքով, այլ արտադրական կարողութեան սեպտեմբերի ուղտագործման համար բանվորական առաջարկները գործնականում իսկապես հաշվի առնելու հիմունքով, — սոցիալիստական մրցութեան ու հարվածայնութեան անցում են ավելի բարձր ստատիվների: Դա արտահայտվում է Ֆարբիկաների և գործարանների բանվորների կողմից հանդիպական արդիֆինսլայան մշակելով, վորի նշանակութեանը կայանում է արտադրական ծրագրի իրագործման, արտադրանքի վորակի բարձրացման և հատկապես արդյունաբերական շինարարութեան բոլլշևիկյան տեմպերի հետագա արագացման գործում ձեռնարկութեան սեպտեմբերի առաջիկ խնայողութեամբ գործադրելու մեջ: Հանդիպական արդիֆինսլայանը հատուկ նշանակութեան և օտանում, վորպես բոլոր բանվորներին սոցիալիստական շինարարութեան մեջ ներդրակելու մեթոդ և վորպես հակահեղափոխական վնասարարութեան դեմ պայքարելու կարեւորագույն միջոց»:

Բայց վորչ ամենուրեք դեռ սաւորին կազմակերպութեանը դիտակցել են սոցմրցման և հարվածայնութեան կազմակերպման այս բարձրագույն ձեւի նշանակութեանը: Հաճախ հանդիպական պլանը անցնում է գործարանային հասարակայնության և տնտեսալարների կողմով, վոր միանգամայն թուլացնում է բանվորական նախաձեռնութեանը: Հանդիպական արդիֆինսլայանի համար պիտի ազատ ճանապարհ ապահովվի դազգյանից մինչեւ պետական, նրան սիրտի աջակցեն մասսայական բոլոր կազմակերպութեանները և տնտեսական միավորութեանները:

«Սակայն իրականում շատ դեպքերում կուսակցական և գործարանային այլ կազմակերպութեանների կողմից հանդիպական պլան մշակելու գործում վորչ միայն պատշաճ աջակցութեան ցույց չի տրվում բանվորական նախաձեռնութեանը, այլ և բացակայում է սոցիալիստական մրցման սպասած կազմակերպութեան իր տարրեր և նորանոր ձեւերով (միջանցիկ հարվածային բրիգադներ, հասարակական բուքսեր և այլն): Իսկ ստանց դրան չի կարելի ծավալվող սոցիալիստական ինդուստրիայի բոլլշևիկյան տեմպերն ապահովել: Դեռ ևս բազմաթիվ են կեզծ հարվածայնութեան դեպքերը արդյունաբերութեան և տրանսպորտի մեջ, դեռ ևս վորչ ջիւղէ ձեւական-բոլորոկրատիկ վերաբերմունք է ցույց տրվում սոցմրցմանը: Դեռ ևս կուսակցութեան անդամների վորչ փոքր մասը չի հատկանում ձեռնարկութեաններում աշխատող կոմունիստների, վորպես արդիֆինսլայանի կատարման համար մղվող պայքարը նախաձեռնողների դերն ու պարտականութեանները» (ԿԿ սեպտեմ. 3-ի 1930 թ. դիմումը):

Հանդիպական արդիֆինսլայանի համար մղվող պայքարի որինակով տեղա-

կան կազմակերպութեանները պետք է ցույց տան, վոր իրենք իսկապես հասկանում են սոցիալիստական պլանայնացման և ներքին իզեանները, յերբ պլանը յուրջ ստուգման է յենթարկվում ներքեւից՝ ցետում, արհեստանոցում, դեպոյում, Ֆարբիկայում և գործարանում: Հանդիպական արդիֆինսլայանի համար մղվող պայքարի արդյունքները է ուղղակի և անմիջականորեն կախված հարվածային յեռամսյակի արտադրական ծրագրի հաջողութեանը, վորակական ցուցանիշների ծրագրի կատարման հաջողութեանը:

## ԱՄՐԱՊՆԳԵԼ ՄԻՆԱՅՈՒՅՍ ՂԵՎԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն բանվորական մասսայի նախաձեռնութեան անումը վորչ մի կերպ չպիտի ամենավորը չափով անգամ նվազեցնի ձեռնարկութեանների դեկավարների պատասխանատվութեան արդիֆինսլայանի կատարման վերաբերմամբ: Ընդհակառակը, հենվելով մասսաների ենտուզիզմի վրա, անտեսվարները կարող են և պետք է բոլորովին այլ կերպ յուժեն ձեռնարկութեան արտադրական կյանքի կարեւորագույն ինդիքները՝ բանվորական լայն մասսաների կողմից աջակցութեան ստանալով: Արտադրութեան մեջ միանձնյա դեկավարութեան ամբապնդման սկզբունքը, դրա հետ միասին բանվորների աշխատանքային հերոսութեան հանդիպական ալիքի իրացման հաջողութեան ամենամանհրաժեշտ պայմանն է հանդիսանում: Մինչդեռ

«... սոցիալիստական շինարարութեան իսկական առաջավոր պոստում կանդնած անտեսալարների կողմից հաճախ դեռ հարկ յեղած չափով չի դիտակցվում իրենց գործի համար ունեցած բացառիկ նպատասխանատվութեանը: Նրանք չեն հասկանում, վոր իրենք անպայմանորեն պարտավոր են ձեռնարկութեան մեջ միանձնյա դեկավարութեան ամբապնդանցկացումը միացնել իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում կուսակցական, պրոֆմիտիստական և կոմյունիստական կազմակերպութեանների, բանվորների և բանվոր-հիմնի կոմունիստական և անկուսակցական ամբողջ ալիքի վրա հենվել կարողանալու հետ» (ԿԿ 1930 թ. սեպտեմբերի 3-ի դիմումը):

Միանձնյա դեկավարության մասին կուսակցության ԿԿ տված դիրեկտիվների թույլ կենսագործումը մի շարք դեպքերում միանգամայն կազմալուծում է արդիֆինսլայանի կատարման ընթացքը: Հաճախ դեկավար է վորոշել, թե վորտեղ և վերջանում կառավարիչի աշխատանքը և վորտեղ է սկսվում կուսակցական և պրոֆմիտիստական տեղական կազմակերպութեանների աշխատանքը: Այդպիսի դրութեանը միանգամայն անհանդուրժելի յե:

Միանձնյա դեկավարութեան սկզբունքի մինչեւ վերջ պարզորոշ անցկացման դեպքում միայն արտադրութեանը հաստատուն օբյեկտների վրա կարվի, ձեռնարկութեան բանվորները ճիշտ ինֆորմացիա կտանան արտադրական առաջադրանքների մասին, հանդիպական արդիֆինսլայանը պրոյեկտարական հասարակայնութեան կանոնավոր հունով կընթանա:

«Անհանդուրժելի յեն դառնում նույնպես ձեռնարկութեաններում միանձնյա դեկավարութեան անցկացնելու բնագավառի խախտումները: Բանվորները շարունակ գանգատվում են՝ «գործարանը տեղ չունի», աշխատանքի մեջ կարգ-կանոն չկա»: Այլեւս չի կարելի հանգուրժել, վոր մեր ձեռնարկութեանները արտադրական որգանիզմներից պարլամենտների վերածվեն: Մեր կուսակցական և պրոֆմիտիստական կազմակերպու-

բյուճաննոր պետք է վերջապես հասկանան, մոր տառնց միանձնյա դիտ-  
վարության ապահովման և աշխատանքի բերքացի համար խիստ սա-  
տախտատարություն հաստատելու մեկն չեմք կարող արդարևարելու-  
թյան վերականգնման խնդիրները լուծել» (Ի. Ստալին. Քաղ. հարց. հարկ-  
տվություն XVI համագումարին) :

### ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

Վերևում թված բոլոր պայմանները, — աշխատանքի արտադրողականու-  
թյան բարձրացումը, սոցմրցման և հարվածայնության ալիքի նոր վերելքը,  
պայքոր հանդիպական պլանի համար, միանձնյա դեկալարության սկզբ-  
բունքի հետեվողական անցկացումը, — այս բոլորը միանգամայն պարտադիր  
նախադրյալներ են հանդիսանում հարվածային յեռամսյակի պլանի վորակա-  
կան ցուցանիշները՝ ինքնարժեքի իջեցման և արտադրանքի վորակի բարձրա-  
ցման առաջադրանքները կատարելու համար :

Պլանի վորակական ցուցանիշների բնագավառում մենք զգալի ճեղքվածք  
ունենք, վորի մասին ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում  
ասաց հետևյալը :

«Այլևս չի կարելի հանդուրժել ուսցիտնալիզացիայի շրջանում նկատված  
չարք ձեռնարկությունների արտադրանքի խախտողի դարտեր : Այդ  
ճեղքվածքները, ինքնարժեքի իջեցման պլանի թերակատարումը և մի  
նեղվածքները ու թերությունները մեշուս են մեր ամբողջ ժողովրդա-  
տնտեսությանը, չեն բուշյ սալիս, վոր նա սուպ գնա : Ժամանակն է,  
վաղուց արդեն ժամանակն է վերացնելու այս խախտողական քիծը : Բայ-  
չեվիկները պարտավոր ցույց տալ, վոր նրանք կարող են լուծել այս  
խնդիրը» :

1929—30 թ. վորակական ցուցանիշների ծրագրի թերակատարման պատ-  
ճառները ընկելով, կարելի է ամենայն վճռականությամբ պնդել, վոր ինչպիս  
տեխնիքական—արտադրական պայմանների տեսակետով ընդհանուր առմամբ,  
նույնպես և կազմակերպչական դժվարությունները հաղթահարելու հնարա-  
վորության կողմից, — օբեկտիվորեն պլանի վորակական առաջադրանքները  
կարող ելին լրելվ ծավալով իրագործվել :

Մենք վո՛չ մի կերպ չենք կարող քողարկել և թերագնահատել այն հիմնու-  
կան փաստը, վոր վերջին յերկու տարիների ընթացքում մենք բացահայտ  
կերպով հետ ենք մնում պլանի վորակական ցուցանիշների ծրագրի կատա-  
րելու դործում : Ամենակողմա սխալը կլինի կարծել, ինչպես այդ անում են  
ընկերներից վոմանք, թե կուսակցության այդ լուրնգների իրագործման սու-  
տիճանը կարող է միայն բանակալան ցուցանիշներով չափվել : Չե՛ վոր այս  
վերջիններս իրենց հերթին կախված են և չեն կարող կախված չլինել վորա-  
կական ցուցանիշների կատարման չափերից : Յուրաքանչյուրի համար պարզ  
է, վոր աշխատանքի բարձր վորակին հենց տնտեսավորման պլանային—սու-  
ցիալիտական ռեժիմի այն սպեցիֆիկ առավելությունն է հանդիսանում, վորը  
մեր առջև լրացուցիչ վիճիտարի ազդյուրներ և ռեզերվներ է բաց անում յինա-  
րարության տեմպերն արագացնելու համար : Ահա՛ դա յե խնդրի էլությունը :  
Վորակական ցուցանիշների ամեն մի վիժում իրոք պլանի վերջրած տեմպերի  
դանդաղեցում է նշանակում, այն սեալ նյութական արժեքների ծավալի իջե-

ցում է նշանակում, վորոնց վրա հիմնվում է պլանի շինարարական և արտա-  
դրական ամբողջ ծրագրերը :

Յեթև վորձենք այս հանգամանքը պայմանականորեն արտահայտել ար-  
ժեքային ծավալով, այն ժամանակ մոտավորապես հետևյալ պատկերը կստա-  
նանք : 1929—30 թվի պլանի մեջ նախադժված ժողովրդատնտեսական տնտե-  
սան ի հաշվ աշխատանքի վորակի բարձրացման 3 միլիարդ ուրբու վոխա-  
րեն, մենք իրապես կատանանք 1—5 միլիարդ ուրբու, վորով վորակական ցու-  
ցանիշների ամբողջ ծրագրերը կկատարվի միայն 50 տոկոսով : Այդպիսիք են  
մեր շինարարության տեմպերի իջեցման մոտավոր չափերը՝ վորակական ցու-  
ցանիշների ծրագրի կատարումը վիժելու հետևանքով : Այստեղից վճռական  
յեղրակացություն պետք է հանել :— Սոցիալիտական շինարարության վիժ-  
խարի ծրագրին իրագործելիս՝ ներքին ռեսուրսների վրա միայն հենվելով՝  
մենք չենք կարող ավելի առաջ գնալ առանց վորակական ցուցանիշների ծրագրի  
լրելվ և անպայման կատարման համար մղվող պայքարում արմատական բեկում  
առաջ բերելու : Յեթև այդ բեկումը առաջ չգա, այն ժամանակ մենք շինարա-  
րության վերջված տեմպերը վիժման վտանգի տակ ենք դնում, դրա հետ միա-  
սին վտանգում ենք նաև հնգամսյակը չորս տարում կատարելու հնարավորու-  
թյունը : Միայն այս, և վո՛չ այլ կերպ պետք է դրվել մեր աշխատանքի վորա-  
կի հարցը :

Յեվ դրա համար էլ պատահական չի, վոր կուսակցության XVI համա-  
գումարի վորոշումներում ընդժվում է սոցիալիտական շինարարության նոր  
եսապում աշխատանքի վորակի տնեցած հսկայական նշանակությունը : Ա-  
ռաջիկա ժամանակաշրջանի համար վորպես հիմնական խնդիր համագումարն  
առաջ է քաշում հետևյալ դերեկտիվը :—

«Արդֆինալյանի անպայման կատարումը, ինքնարժեքի իջեցումն ու  
արտադրանքի վորակի բարձրացմանը վերաբերող պլանային առաջա-  
դրանքների խտագործումը, ուսցիտնալացման ավելի վիտա-  
կան և պլանաչափ անցկացումը, արտադրության մեջ քրակի և կո-  
րուստների դեմ պայքարելը, աշխատանքի արտադրողականության  
բարձրացումը և մի շարք նյութերում յեղած նեղվածքների լրելի-  
րացիան :

Համագումարի այս դերեկտիվը պարտավորեցնում է մեզ վո՛չ միայն  
չնվազեցնել վորակական ցուցանիշների վերաբերմամբ առաջադրված պահան-  
ջները, այլ և՛ տնտեսության տեխնիքական դինվածության հետագա ամման և  
նրա հասարակական վերակառուցման դուզընթաց՝ ամեն կերպ ավելացնել  
այս պահանջները և խիստ կերպով հետևել դրանց ճշգրիտ կատարմանը :

Այլևս չի կարող շարունակվել վորակական ցուցանիշների հետամնացու-  
թյան այդպիսի վիճակը : Իրա համար էլ այն առաջադրանքները, վորոնք նշ-  
վում են, պետք է, թեպետ վո՛չ լրելվ չափով, ծածկեն տնեյալ տարիների  
ճեղքվածքները : Արդյունաբերական ապրանքների ինքնարժեքի իջեցումը 7 տո-  
կոսով, շինարարության արժեքի իջեցումը 8 տոկոսով, բանվորի աշխատան-  
քի արտադրողականության բարձրացումը 30 տոկոսով, — սեալ դրանք են հա-  
տուկ յեռամսյակի վորակական կարևորագույն առաջադրանքները : Հասկա-  
նալի յե, վոր պլանի վորակական ցուցանիշների կատարումը արդյունաբե-  
րության արտադրական ամբողջ ապարատից աննախընթաց լարվածություն,

խանութի գաղափարը և յերկրի ինժեներական—տեխնիքական ուժերից վիթխարի ջանքեր կատարանք: Բայց այլ կերպ չի կարող լինել: Այստեղ ևս կենտրոնական խնդիրը նշված վորակական բարձր ցուցանիշները փառքիկային գործարանին, ցեխին, ագրեգատին, դազգային, պրոլետարիատի լույս մատանի իսկական գիտակցության հասցնելն է: Երազբի հաջող իրադրոժման համար վճարական նշանակութուն ունի այն, վոր վորակական ցուցանիշների առաջադրանքները վո՛չ միայն վաստորեն ներքև թողնվեն այլ և յուրաքանչյուր բանվորին հասցվեն՝ միանգամայն կոնկրետ տեխնիքական—արտագրական առաջադրանքների ձևով:

Դրա հետ միասին պլանի մեջ հսկայական նշանակութուն է ստանում արտադրական պրոցեսի քաղցրեկալացման ամբողջ սխտեմը, վորը պիտի անհրաժեշտ նախադրյալներ ստանալի ինչպես գործող, նույնպես և շահագործման մեջ նոր դրվող սարքավորումն առավել արդյունավետ կերպով ստացործելու համար: Ասանդարտացման, բրակի նվազեցման, արտադրության մեջ կորուստների դեմ կովելու հարցերը պետք է պատշաճ տեղ բռնեն ձեռնարկության մեջ և հասարակական կազմակերպության մեջ և հարկ յեղած անխնայական դեկավարություն ստանան:

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒՓԸ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Հարվածային յեռամսյակում պետք է անհրաժեշտ այնպիսի պլանային—կազմակերպչական միջոցներ ձեռք ստանան, վորոնք իրապես ստանալեն արտադրութանը բանվորական ուժով, իսկ բանվորներին՝ մատակարարմամբ: Ըստ վորում խոսքը վո՛չ միայն պարենային մատակարարման չափերի, այլ և այս մատակարարումը վարելի վեր այնպես կազմակերպելու մասին է, վոր առավելագույն չափով խնայվի աշխատանքային ժամանակի վատնումը:

Վորպես կարևորագույն միջոցներից մեկը, պլանում պիտի վճարական պայքար նախատեսվի մասնավոր շուկայի գների հետադա աճման և բանվորի ունի աշխատավարձի վրա այդ գների ունեցած ազդեցութան դեմ վճարական պայքար մղելը:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր բանվորական ուժը, աշխատավարձը և մատակարարումը ամենասերտ կապի մեջ են և այդ գործոնները ազդում են արդիւնալիսի ու աշխատանքի վորակի համար մղվող պայքարի հաջողութան վրա: Անցյալ տնտեսական տարում բանվորների ունի աշխատավարձի բարձրացման պլանը զբալի չափով թերակատարվեց: Ըստ վորում մեր սպառողական կոոպերացիայի «նեպմանական վոգու» (Ստալին) հետևանքով առանձին շրջաններում բանվորական մատակարարման մեջ անկանոնութուններ ել են տեղի ունեցել: Ըստ ինքյան հասկանալի յե, վոր այս բոլորը չեք կարող չաղել բանվորական ուժի հոսունության վրա, մասնավորապես մի այնպիսի արդյունաբերական շրջանում ինչպես Դոնավազանն է, վորտեղից մեծ չափերով բանվորական ուժ հոսեց դեպի գյուղ՝ մեծ մասամբ մատակարարման, բնակարանային—կենցաղային պայմանների անկանոնության հետևանքով:

Առաջիկա յեռամսյակում նմինալ աշխատավարձն ընդհանուր առմամբ կայուն է մնում. դրա աճումը կկատարվի միայն ի հաշիվ արտադրանքի նորմաների և բանվորների վորակավորման փոփոխության: Աշխարձի ընդհա-

նուր ֆոնդն աճում է մի բանի տակառով՝ գլխավորապես պրոլետարիատի թվի հետադա աճման ազդեցության տակ: Անցյալ տարվա ընթացքում արդյունաբերության մեջ եր քաշվել մոտ 600 հազար նոր բանվոր: Առաջիկա յեռամսյակում նոր բանվորների ներհոսում արդյունաբերության մեջ սպասվում է մոտ 100 հազար հոգու չափով: Այդպիսով բանվոր—գատակարգի բարեկեցության աճման բնագավառում հարվածային յեռամսյակի գլխավոր խնդիրը մասնավոր գների աճման դեմ պայքարելն ու արդյունաբերական կենտրոններին պարենային և լայն սպառման կարևորագույն առարկաների մատակարարման ճշտորոշ կազմակերպումն է: Բանվորական մատակարարման պլանը բանվորներին պարեն մատակարարելու նորմերի զգալի ավելացում է նախատեսվում: Այդպես որինալ, հարվածային յեռամսյակում, անցյալ տարվա IV յեռամսյակի հետ համեմատած, հացամթերքների մատակարարման նորմերը կաճեն միջին թվով մի բանվորին 30%-ով, կարսոֆիլի նորմերը՝ 50-60 տոկոսով: ձկան և մսինը՝ 50-60 տոկոսով: յուղին ու մարգարիտինը՝ 20-25%-ով, բուսական յուղինը՝ 75%-ով, շաքարինը՝ 60 տոկոսով և այլն: Հետևապես սնունդի կարևորագույն մթերքների վերաբերմամբ մատակարարման զգալի ուժեղացում է նախատեսվում: Այժմ խոսքը սպառողական կոոպերացիային է ու բանվորական հասարակայնության կողմից նրա վրա վերաբերվումն է: Առաջիկա յեռամսյակում համարյա ամենուրեք բանվորական կենտրոններում փակ բաշխիչներ են կազմակերպվում, վորոնք պետք է ուժեղ չափով կարգավորեն բանվորական մատակարարման գործը:

Բանվորական մատակարարման պլանը և մասնավոր գների բարձրացման դեմ պայքարելը հսկայական չափով կախված են դյուրաշտնտեսական մթերումների հաջող կատարումից: Առաջիկա յեռամսյակում մենք մթերման պլանի հատուկ կոնցենտրացիա կունենանք: Բավական է հիշել, վոր հարուկ յեռամսյակում գյուղատնտեսական մթերումների ընդհանուր ծավալը մոտ 2-5 միլիարդ ուրբու յե համում, վոր համարյա յերկու անգամ վերադանցում է անցյալ տարվա համապատասխան յեռամսյակի գյուղատնտեսական մթերումների պլանին: Կուսակցութունը և բանվոր գատակարգն այժմ լարում են իրենց բոլոր ուժերը, վոր լիովին իրադրեն մթերումների պլանը, վորն ըստ էյության նախորդում է հնգամյակի յերրորդ տարվա մատակարարման ամբողջ պլանի հուսալիութունը: 1931 թվի առաջին կեսում մենք հիմնականում մեր տնտեսութունը կզարգացնենք 1930 թվի բերքի բազայի վրա հիմնված:

### ՀԱՐԱՆՔ, ԳԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Տնտեսական շինարարության հարվածային յեռամսյակը սոցիալիզմի աճող ուժերի նոր հառաջխաղացում է նշանակում: Դատակարգային թշնամիների կատաղի դիմադրությունը բանվոր գատակարգը՝ գյուղացիության հիմնական մատայի հետ դաշնակցած, կուսակցության և նրա լենինյան կի փորձված ղեկավարությամբ՝ սոցիալիստական շինարարության ճակատում տարած նոր հաղթանակներով է պատասխանում: Պանիկայի չենթարկվելով իր սեփական շարքերում աջ և «ձախ» ոպորտունիստների թերահավատությանն ու հոտեհությունն հաղթահարելով, կուսակցութունը ղեկի սոցիալիզմի վերջնական հաղթանակն է տանում պատմական նվազագույն կարճ ժամկետներում: Գլխավոր վտանգն ալ վտանգն է:

«Ասիական» սրբապատկերով, Կուսակցութեանը սպորտունիզմի նոր արտահայտութեան դեմ առավ, հանձին աջ թեքման (Բուխարինի խմբակը) : Աջ թեքումը Կուսակցութեան գլխավոր գծին հակադրեց իր բացորոշ սպորտունիստական գիծը : Աջ թեքումը ունեցողների դիմը տանում է դեպի անձնատվութեան յնդիլի կուլտի-կապիտալիստական տարրերի առջև : Աջ թեքման գծի իրականացումը, վորն որչեղարիքներն կուսակցութեան գործակալութեանն է հանդիսանում, մեր յերկրում սոցիալիզմի շինարարութեան վիժում է կապիտալիզմի վերականգնում կնշանակեր : Կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ճակատով ծախսուելն հարձակման անցնելու ժամանակաշրջանում, աջ թեքումը կուսակցութեան մեջ գլխավոր վտանգն էր, և մնում է այդպիսին : (Կի հաշիվով. առթիվ XXV համագումարի ընդունած բանաձևից) :

Աջ սպորտունիզմին և դրան հաշավողական վերաբերմունք ունեցողներին և ուղղում կուսակցութեանն իր գլխավոր հարվածը : Աջ թեքման և «ձախ» «ՅԱՐՈ» դեմ մղվող վճռական և հետևողական պայքարը սոցիալիստական հաջող հարձակման համար նանսպարհ է բաց անում :

Տնտեսական աճման հետագա անխուսափելի զգվարութեաններին և դասակարգային պայքարի սրման հողի վրա մենք վերջերս նկատում ենք ամենատեսակ յերանգներն սպորտունիստական տարրերի զգալի աշխուժացում : Նրանք ուժեղացնում են իրենց Ֆրակցիոն յեւույթներն ընդդեմ կուսակցութեան գլխավոր գծի՝ սոցիալիստական շինարարութեան հիմնական հարցերի վերաբերմամբ : Աջ յերկերեսանինը՝ կուսակցութեան Լենինյան ղեկավարութեան դեմ մղած պայքարում անսկզբունք բրոկի մեջ մտնելով հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդների հետ, այժմ մեր զգվարութեաններին մի ամբողջ «կոնցեսյա» յեն ծավալում : Նրանք մատնանում են, վոր 1929—30 թիվի պլանում նախագծված աշխատանքները մեր ուժերից վեր յեղան, վոր արհեստական լրացուցիչ յարվածութեան ստեղծելու հետևաքով, շինարարութեան «վոչ ուեալ» տեմպերի շնորհիվ մեր ժողովրդանանասութեան մեջ անհամաչափութեանն է՛լ ավելի է սրվել :

Առանձին հարձակումներն յե յենթարկվում բանվորական հարվածայնութեան և հանդիպական արդՖինպլանի աճող ալիքը, վորն իբր թե ինչ վոր բյուրոկրատիկ յեղաթյուրման բնույթ է ընդունել և սառեցրել է բանվորական մասսաներին : Աջ տարրերը դառն արտասունք են թափում, դանդաղատվելով, վոր հանդիպական արդՖինպլանը իբր թե վատասող բարոյական-քաղաքական ճնշման բնույթ է ընդունել և բանվորների ու տնտեսավարների ղեհահատելի յավերի մեջ պասիվութեանն է առաջ բերել : ԱրդՖինպլանի համար մղված պայքարում մասսայական քաղաքական աշխատանք կատարելուն աջ տարրերը հակադրում են արտադրական հարցերի «գործնական» քննարկման կոչը... Ընդ մին զվարտութեամբ յոսվում է բանվոր դասակարգի նյութական բարեկեցութեան աճող անբարենպաստութեան և այլն մասին, վոր, իհարկե, վո՛չ մի կերպ այլևս չի կարող նպաստել պրոլետարիատի աշխատանքների հերոսութեանը բայլչեիկյան հնգամյակի տեմպերի համար մղվող պայքարում : Այս ամբողջ սպորտունիստական պանիկյորական աղմկարարութեանն ու ճիչը իրականում մեր կուսակցութեան Լենինյան գլխավոր գծի դեմ հարձակվելու, մեղ զեպի «նեղ տեղերին հավասարվելու»

սպորտունիստական այն տեսութեանը հետ տանելուն փորձ է, վորը հերքված է հենց իր, կյանքի կողմից : Ճիշտ է, հին բանաձևերը նորերին են փոխարինում, յոսվում են նշված պլանների վոչ ուեալ յինելու մասին կարգերի թուլութեանը պատճառ բերելով : Փոխանակ ամբողջ կուսակցութեան ուշադրութեանը մորիլիդացիա անելու և այս «նեղ տեղը» հաղթահարելու, աջերը պահանջում են հավասարվել նրան, պահանջում են դանդաղեցնել տեմպերը :

Դասակարգային թշնամու գործակալութեան՝ կուսակցութեան դեմ միատեղ պայքարելու համար անսկզբունք բրոկ կազմած աջ և «ձախ» սպորտունիստներին դեմ անողոք պայքար մղելը ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման անցնելու անհրաժեշտ պայմանն է հանդիսանում : Դյալավոր հարվածն աջ վտանգին ուղղելով, կուսակցութեանը միաժամանակ կուժեղացնի պայքարը տրոցկիստական և կիսատրոցկիստական «ձախ» տարրերի դեմ :

Հարվածային յետամոյակը ամբողջ Ֆրոնտով սոցիալիստական ծավալուն հարձակման յերկաթյա յեռնաշղթայի ամենազգվարին զաղաթներից մեկն է : Նա մի շնուութեան է հանդիսանում, վորը սլեաի ցույց տա, թե ինչ չափով մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները ի վիճակի կլինեն հնգամյակի տառաջիկա յերրորդ տարում շինարարութեանն է՛լ ավելի բարձր տեմպեր ապահովել : Հաղթանակի բոլոր շաները կուսակցութեանն ու բանվոր դասակարգը յրենց սեփական ձեռքերումն են պահում : Չկայ այնպիսի որչեղարիք արգելք, չկա այնպիսի ուժ, վորը կարողանա հետ դարձնել սոցիալիզմի հաղթանակին թաղարք : Խորհրդային Միութեան հերոսական պրոլետարիատը կկարողանա աշխատանքային հերոսութեան որինակներ ցույց տալ, կկարողանա սոցիալիստական հարձակման յուկական բայլչեիկյան տեմպեր ցույց տալ :

Յե՛վ այն ժամանակ-հաղթանակն ապահովված է :



## ԴժՎԱՐ ՀԱՍՎԱՆՍԼԻ ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1) Կապիտալացիայի յենը արկվել · դժվարութեանները առջև չիտնութեան մեջ ընկնել, նահանջել, անճանառու լինել :

2) Կապիտալիստական ուսումնարաններ — նրանք, վորոնք ցանկանում են մեր յերկրում հին կարգը, կայսրածատերերի և կապիտալիստների իշխանութեանը վերահաստատել :

3) «Զախ» մենշեվիկյան լիբերալիզմ և դեմոկրատիզմ — խոսքով լայն ազատութեան, մեծազգայն Փրայնի խոսքի, մամուլի, ընտրութեանները և այլն լիակատար ազատութեան մասին, իսկ իրոք ծառայութեան բուրժուազիալին, ընդդէմ պրոլետարիատի շահերի :

4) Պլատֆորմա — քաղաքական վորոշ հայացքների միասնական սիստեմ :

5) Իմպրոպաչին կախում · արասանմանից մեքենայներ և արտադրութեան զանազան միջոցներ ներմուծելու անհրաժեշտութեան :

Աշխատանքը կազմեց՝ Ա. ՄԱՅՄԻՆ

2013

« Ազգային գրադարան



10434  
NL0046493

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (2<sup>1</sup>/<sub>2</sub> մանուկ)



УДАРНЫЙ КВАРТАЛ СТРОИТЕЛЬСТВА НАРОДНОГО  
ХОЗЯЙСТВА

Госиздат ССР Армении  
Эривань—1931